

2. Նէպի Սամուէլ. — Նէպի Սամուէլը՝ Եմմաւուսի մօտ, Հրէաստանի ամենէն բարձր տեղերէն մին է: Անոր գագաթէն (895 մ.) կը տեսնուի Յոպպէի ծովը, մինչեւ Մովաբի լեռները, եւ Քէփրոնի բարձունքէն մինչեւ Գարիզին եւ Կարմեղոսի լեռները: Միջին դարուն, ուխտաւորները Պէյթ Նուպայէն եւ Եմմաւուսէն անցնելով՝ առաջին անգամ այս բարձրունքէն կը նշմարէին Ս. Քաղաքին պատերը, եւ իրենց ուրախութենէն կոչեցին զայն ուրախութեան լեռ, Mons gaudii:

Ս. Գրական ո՞ր տեղւոյն կը համապատասխանէ Նէպի Սամուէլը. — Մասիայի, ուր Սամուէլ դատեց ժողովուրդը, կը պատասխանեն Եւսեբիոս և Յերոնիմոս. Ռաւսարայիմ-Սոֆիմի՝ մարգարէին հայրենիքը եւ զերեզմանը, կ'ըսեն քրիստոնեաները Թէոդոս սարկաւազին հետ, Զ. դարէն սկսեալ. մին և միւս նոյնացումները վէճեր յարուցած են: Եւսեբիոս Մասիան կը տեղականացնէ Կարիեղ էյ Էնապի մօտ, ուր Տապանակ ուխտին ժամանակ մը մնաց, Յերոնիմոս ալ կ'ընդունի նոյնութեամբ:

Զ. դարուն, Նէպի Սամուէլը նշանաւոր սրբավայր մըն էր. «Երուսաղէմէն մինչև Ռամաթա, ուր թաղուած էր Սամուէլ մարգարէն, 530 ին կը գրէ Թէոդոս, հինգ մղոն կը հաշուուի»: Յերոնիմոս որ Եւսեբիոսի նման, Ռամայէն տարբեր քաղաք մը կը նկատէ Ռամաթայիմ-Սոֆիմը, կը շփոթէ Արիմաթայի հետ, Ռեմլէ, և հոն ցոյց կուտայ Սամուէլի զերեզմանը: Յետոյ կ'աւելցնէ թէ մարգարէին ոսկերտիքը Արկատիոս կայսեր կողմէ Թրակիա փոխադրուեցան 400 ին, առանց ըսելու թէ ո՛ւր տեղ գտնուեցան անոնք: